ԱՐԱՐԱՏԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ
ԿԵՆՏՐՈՆ

PUBLIC ENVIRONMENTAL

INFORMATION AARHUS
CENTER

OF ARARAT

Ք. Արարատ, Շահումյան 34
Հեռ. 093 06 09 07 Էլ. Հասցե. ripsime-84@mail.ru

ՀՀԲՆ նախարարարարոն

Ա. Գրիգորյանին

**Տեղեկատվություն ստանալու հարցում**

Հարգելի պարոննախարար.

Հիմք ընդունելով ՀՀՍահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀկողմից վավերացրած Օրհուսի համաձայնագր ըն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,

Խնդրում եմ Արարատի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն Արարատի մարզի Ազատաշեն, Արբաթ և Խաչփառ գյուղերով անցնող Հրազդան գետից տարածվող գարշահոտության պատճառի մասին, քանի որ բնակիչները բարձրաձայնել են, որ մշտապես այդ տարածքներից անտանելի հոտ է գալիս:Արարատի մարզպետը տեղեկացրել է Օմբուդսմենին, որ տվյալ տարածքներում ոռոգման ջուր ստանում են Հրազդան գետից և ջրի աղտոտվածության և գարշահոտության պատճառը թունաքիմիկատներն ու կեղտաջրերն են, որոնք թափվում են Հրազդան գետը: Խնդրում եմ նաև տրամադրել , թե ինչ քայլեր են ձեռնարկվել նախարարության կողմից տվյալ հարցի լուծման վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով Արարատի Օրհուս
կենտրոնի համակարգող՝ Հռիփսիմե Սարգսյան

16.10.2015թ

ՀՀ բնապահպանության
նախարարության աշխատակազմի
Քարտուղարության ընդհանուր
բաժին
Մուտք № 32570
«21» 10 2015թ.